

դային-մշակութային ինքնավարութեան մասին, իրաւունք ունի միանգամայն, երբ նա իր յօդուածին «Փոքրամասնութեանց դրախտը» վերնագիրն է տալիս: Այլապէս անհասկանալի պիտի լինէր դերման փոքրամասնութեան (էսթոնիոյ) ներկայացուցչի՝ թղթակցի այն հարցին, թէ ի՞նչ առանձին ցանկութիւն ունին նրանք յարտնելու իրենց կարիքների մասին, հետեւեալ կտրուկ եւ պարզ պատասխանը.

«էսթոնիայի փոքրամասնութիւնները այլեւս ոեւէ ցանկութիւն չունին»: Կարճ. նրանք բոլորն էլ ստացել են իրենց գոհացումը:

Ու թղթակիցը պարտք է համարում ընդդէմ էլ էսթոն կառավարութեան կատարեալ բարեացակամութիւնը այս խնդրում, նրա չիտակ վերաբերմունքը: Դրանով էլ բացատրելու է հարկաւ, որ «պետական» եւ փոքրամասնական ազգերի խտրութիւն չկայ այնտեղ, վերացել է մէջտեղից փոխադարձ անվստահութիւնը, որ ամենին անխտիր եւ սրտանց իրենք զիրենք հարազատ քաղաքացի են համարում էսթոն պետութեան:

Ահա մի գրութիւն, որ դեռ այսօր էլ շատ ու շատ երկիրների համար կարող է խեղալական սեպուիլ: Դեռ տարիներ պիտի անցնին երբեք, մինչեւ որ այդ փոքրիկ, նորազատ էսթոն պետութեան օրինակը վարակիչ դառնայ շատերի համար, — լինին նրանք հին թէ նորակազմ:

Նման մի գրութիւն պիտի ստեղծուի շուտով, օրինակ, նաեւ Պրուսիայի ազգային փոքրամասնութեանց եւ յատկապէս լեհ փոքրամասնութեան համար: Թէեւ արդէն իսկ Պրուսիոյ լեհերը, դանիացիք եւ մէկ-երկու ուրիշ փոքրամասնութիւններ ունին իրենց դպրոցական ինքնավարութիւնը, բայց մտադրութիւն կայ այդ վերջինն ընդարձակելու եւ ազգային-մշակութային կատարեալ ինքնավարութիւն ստեղծելու: Մօտաւորապէս այնպէս, ինչպէս գոյութիւն ունի էսթոնիայում: Արդէն իսկ այդ իմաստով օրէնք ընդունուած է: Խնդիրը ուրեմն կազմակերպութեանն է վերաբերում: Այստեղ եւս պետութիւնն է, որ իր ելեւմտացոյցից բաժին պիտի հանէ ազգային փոքրամասնութեանց մշակութային ձեռնարկների համար, այստեղ եւս նախատեսւում է կա-

տարեալ ազատութիւն տալ բոլոր քաղաքացիներին, անկաշկանդ կերպով որոշելու իրենց ազգային պատկանելիութեան հանգամանքը: Անգամ ծագումով, լեզուով եւ անցեալով գերման մարդը կարող է եւ իրաւունք ունի, օրինակ, ինքզինքը լեհ փոքրամասնութեան անդամ համարելու, նրա «ազգացուցակ»-ի մէջ մուծել տալու իր անունը:

Հարկաւ, վաղ թէ ուշ միւս երկիրները եւս պիտի որդեգրեն այս սկզբունքը եւ ճանաչեն մշակութային ինքնավարութեան իրաւունքը: Ոմանք արդէն իսկ այդ ճամբու վրայ են: Եւ սակայն այսօրուան համար այդ իրականութիւնը, դժբախտաբար, բացառիկ երեւոյթներ չարքը դասելու է: Փաստն այն է, որ այսօր եւս, ինչպէս պատերազմից առաջ, Եւրոպայի շատ երկիրներում՝ ազգային փոքրամասնութիւնները հալածական վիճակի մէջ են դրանք: Եւ որ առանձնապէս ցաւալին է, ազգային ճնշումները նորակազմ պետութիւններում կարճէք աւելի մեծ չափերի են հասնում, աւելի անհանդուրժող ոգի են յայտնաբերում նորազատ ժողովուրդները, քան՝ հինները:

Լեհաստանը, օրինակ, որ ընդամէնը տասը տարի առաջ գերի էր, երբեակ չլթաներով կաշկանդուած, երբ նրա լեզուն դաժամօրէն հալածուած էր բոլոր դպրոցներից եւ ամէն կարգի հիմնարկներից, այսօր նա ինքն է դարձել անհանդուրժող, անգամ հալածիչ՝ իր փոքրամասնութեանց լեզուի եւ ազգային միւս արժէքների հանդէպ: Եւ մի մոռանաք, որ այդ նոր պետութեան բնակչութեան 1/3-ից աւելին — մօտ 10 միլիոնը — ազգային փոքրամասնութիւններից է բաղկացած — ուքրայնացիներ, հրեաներ, ուսուներ, գերմաններ, եւայլն, եւայլն: Այսօր այդ փոքրամասնութիւնները հարկադրուած են «պետական ազգի» (լեհ) դէմ գրեթէ այն պայքարը մղել, ինչ որ այն ժամանակ հպատակ եւ ճնշուած լեհ ժողովուրդը՝ այն ժամանակուան «պետական ազգերի» դէմ:

Պատկերը շատ աւելի մխիթարական չէ նաեւ, օրինակ, Ռումանիայում, որ պատերազմի հետեւանքով անհունօրէն մեծացած է թէ՛ տարածութեամբ եւ թէ՛ բնակիչների թվով: Այնտեղ եւս աննշան տեղ չեն դրաւում